ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **14/սեպտեմբերի/2021 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ....8.... անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ համայնքի ղեկավարի տեղակալներ Սամվել Մարգարյանը և Աշոտ Խաչատրյանը, համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ Անուշ Առաքելյանը, ֆինանսական բաժնի պետ Արմինե Ղազարյանը:

Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վարդան Հովհաննիսյանը

Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գոհար Թադևոսյանը

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վարդան Հովհաննիսյան/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի սեպտեմբերի 14-ի նիստի հետևյալ *օ ր ա կ ա ր գ ը.*

1.1. Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի N 57-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.2. Ջերմուկ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը Հայաստանի Հանրապետությանը հատկացնելու համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքի ղեկավար Վ. Հովհաննիսյան

1.4. Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամին տեղական տուրքի և վճարի գծով արտոնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Դրամական հատկացումներ կատարելու և օգնություններ տրամադրելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ Ա. Առաքելյան

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 20-ի N 42-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ----8---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 57-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերին համապատասխան՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 10-ի «Ջերմուկ համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 57-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) «մարմին» բառը և դրա համապատասխան հոլովաձևերը փոխարինել «մարմիններ» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով,

2) «III. ԽՄ-Ի ՔԱՆԱԿԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ» բաժնի 8-րդ կետում՝

ա. «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ ենթակետով՝ «2) երիտասարդության հարցերով ԽՄ»

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------8---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65-Ն/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին ենթակետին, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման և 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելումասին» N 1920-Ն որոշման 64-րդ կետին համապատասխան, հիմք ընդունելովՀ այաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականիդեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի՝ ս/թ օգոստոսի 25-ի N 1/փ-259 դրական եզրակացությունը՝

1. Ջերմուկ համայնքի սեփականությունը հանդիսացող 10-002-0445-0024 կադաստրային ծածկագրով 1,2 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի (հողատեսքը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխել որպես հատուկ նշանակության հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------6---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------2----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Վարդան Հովհաննիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի վարչական տարածքում գտնվող 10-002-0445-0024 կադաստրային ծածկագրով, 1,2 հա մակերեսով հողամասը պետության կարիքների համար Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Պաշտպանության նախարարության, հատկացնելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հջորդող օրվանից:

Կողմ----------6---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------2----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով՝

1. Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից Ջերմուկ համայնքում «Գնդեվանքի քայլարշավային արահետի բարեկարգում», «Շահումյան, Բ. Վարդանյան, Մյասնիկյան, Մելիք Ադամյան և Զարենց փողոցների վերականգնում, բարեկարգում և Քարայծ տանող ճեմուղու կառուցում», «Մաշտոցի փողոցի բարեկարգում» ներդրումային ծրագրերի շրջանակներում իրականացված աշխատանքների շինարարության թույլտվությունների տրամադրման համար սահմանել արտոնություն՝ տեղական տուրքի զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

2. Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Ջերմուկ համայնքում իրականացված և իրականացվելիք շինարարական աշխատանքների ավարտը փաստագրելու և շահագործման թույլտվությունները ձևակերպելու համար սահմանել տեղական վճարի գծով արտոնություն՝ կիրառելով տեղական վճարի զրոյական դրույքաչափը:

Կողմ----------7---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------1----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68-Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Անուշ Առաքելյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով սոցիալական, առողջապահության, սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հարցերի մշտական հանձնաժողով, հաստատել հանձնաժողովի եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. Ջերմուկի համայնքի 2021 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Ջերմուկ համայնքի հետևյալ բնակիներին՝

Նարինե Դավթյան՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամի չափով

Գագիկ Խաչատրյանին 200 000 (երկու հարյուր հազար) դրամի չափով:

2.Բռնկված հրդեհի հետևանքով Ջերմուկ համայնքի Հերհեր գյուղի բնակիչ Վիրաբ Ասպուրակի Սիմոնյանի այրված հացատունը վերականգնելու և Գնդեվազ գյուղի բնակիչ Վարդան Երջանիկի Խաչատրյանի առանձնատանը պատճառված վնաս մի մասը փոխհատուցելու նպատակով Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեից կատարել դրամական հատկացում, համապատասխանաբար՝ 150 000 (հարյուր հիսուն հազար) և 200 000 (երկու հարյուր հազար) դրամի չափով:

3. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Արմեն Ավետիսյանի՝ արջի կողմից անասունների կոտորելու պատճառով կրած վնասի փոխհատուցման նպատակով Ջերմուկ համայնքի 2021 թվականի բյուջեից կատարել դրամական հատկացում 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամի չափով:

4.2020–2021 թթ ձմռան ամիսներին «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ–ի՝ իրեն ամրակցված ԴՏ–75 թրթուրավոր տրակտորով Գեղարքունիքի մարզի Կարմիր և Սյունիքի մարզի Սև լճերի հարակից տարածքներում տեղակայված սահմանապահ դիրքերի ճանապարհների մաքրման աշխատանքներին աջակցելու համար նշված ՀՈԱԿ–ի աշխատակից Արտավազդ Զախարյանին, որպես պարգևատրում, հատկացնել 100 000 (հարյուր հազար) դրամ:

6. Հաշվի առնելով Ջերմուկի քաղաքի Մաքսիմ Գորկու անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենի դիմում-խնդրանքը՝ Ջերմուկ համայնքի վարչական բյուջեից «9-2-1-51 - հիմնական ընդհանուր կրթություն» գործառնական դասակարգմամբ 4639-այլ ընթացիկ դրաշանորհներ տնտեսագիտական հոդվածով 2021 թվականի 4-րդ եռամյակի համար դպրոցին հատկացնել 1350.000 /մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ Ջերմուկ համայնքի քաղաքային բնակավայրի տարբեր թաղամասերից աշակերտների տեղափոխումը կազմակերպելու համար:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------8---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69-Ա/

Լսեցին

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 20-Ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գոհար Թադևոսյան/

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածներին համապատասխան՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 20-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող ուղղակի վարձակալության տրվող ավտոտնակների, բնակելի և ոչ բնակելի տարածքների վարձավճարների չափը սահմանելու մասին» N 42-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

ա. որոշման վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքը՝ բնակելի, ոչ բնակելի տարածքները և ավտոտնակները վարձակալության իրավունքով տրամադրելու, վարձավճարների չափը սահմանելու մասին»,

բ. որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին կետով՝

«3.1. Համաձայնության տալ Ջերմուկ համայնքի սեփականություն համարվող անշարժ գույքը՝ բնակելի, ոչ բնակելի տարածքները և ավտոտնակները ուղղակի վարձակալության (առանց մրցույթի) տրամադրելու վերաբերյալ Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ սահմանելով, որ վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ պայմանագրեր կնքելու, դրանցում փոփոխություն կատարելու և լուծելու մասին որոշումներն ընդունում է Ջերմուկ համայնքի ղեկավարը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----7------ *Դեմ*----0------ *Ձեռնպահ*----1------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	ստորագրություն
Բաբայան Կավկազ Ջավենի	բացակա
Բաբաջանյան Սանասար Խաչատուրի	
Բագրատյան Արտակ Կառլենի	
Բունիաթյան Մխիթար Խաչատուրի	բացակա
Գևորգյան Արտավազդ Վարազդատի	
Գրիգորյան Արմեն Գրիշայի	

Համբարձումյան Մխիթար Սամվելի	
Սարգսյան Հասմիկ Ժորայի	
Սիմոնյան Արտուշ Էդվարդի	
Ստեփանյան Գագիկ Ստեփանի	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____